տեմբերյան հեղափոխությունից հետո, երբ քաղաքական իրադարձության հետևանքով ավելի մուր և ավելի լարված եղանակով դրսևորվեցին դասակարգային հակասությունները, այդ փոքրաթիվ ինտելիգենցիային վիճակվեց խաղալ բռնկված պայքարի մեջ շատ ավելի վճռական դեր, քան թե նախկին մելիքական և այլ տիպի ազնվական կալվածատիրության անկազմակերպ շերտին, քան թե ավանդական, բայց հնացած կազմակերպության մեջ քարացած հոգևորականության ներկայացուցիչներին։ Հենվելով նորակազմ աշխատավոր գյուղացիության և տեղում կամ դրսում բանվորական դասակարգային գիտակցություն ձեռք բերած խավերի վրա, թշնամական կամ գաղափարական կապեր հաստատելով իրավորեն չկազմակերպված, բայց իր շահերով ներքուստ սերտորեն միավորված կապիտալիստական շերտի հետ՝ ինտելիգենցիայի զանազան խմբավորումները թե՛ մայիսյան շարժումների ժամանակ և թե՛ նրանից առաջ և հետո տալիս էին մեկ այս, մեկ այն ուղղություն հեղափոխության ընթացքին, մինչև գավառում վերջնականապես սովետական կարգերի հաստատումը։